Գիտե՞ք, որ...

«Ասեղնագործությունը հին հունական դի-ցաբանությունում»

Աթենաս-Պալլասին Զևսն է աշխարհ բերել: Շանթարձակ Զևսը գիտեր, որ բանականության աստվածը՝ Մետիսը, երկու երեխա է ունենալու: Դուստրը՝ Աթենասը, և արտասովոր խելքի ու զորության տեր մի տղա: Ճակատագրի աստվածուհիները Զևսին հայտնեցին գաղտնիքը, որ Մետիս աստվածուհու որդին նրան գահընկեց կանի և կխլի աշխարհի տիրապետությունը: Վախեցավ մեծն Զևսը: Փաղաքուշ խոսքերով քնեցրեց Մետիս աստվածուհուն ու կուլ տվեց, նախքան նա կծներ իր դստերը՝ Աթենասին: Ժամանակ անց Զևսը սոսկալի գլխացավ ունեցավ. որդուն՝ Հեփեստոսին, հրամայեց ճեղքել իր գլուխը, որ ազատվի գլխացավից: Մի հարվածով շանթարձակի՝ Զևսի գլխի միջից դուրս եկավ հզոր ռազմուհի Աթենաս-Պալլաս դիցուհին՝ ոտից գլուխ զինավառ, շողշողուն սաղավարտով, նիզակն ու վահանը ձեռքին, և կանգնեց օլիմպացի աստվածների ապշահար հայացքի առաջ:

Նա իմաստություն ու գիտություն էր շնորհում, մարդկանց **արվեստ** ու **արհեստ** սովորեցնում, իսկ Հունաստանի աղջիկները մեծարում էին Աթենասին, որովհետև իրենց **ձեռագործ էր** սովորեցնում: Աստվածներից ու մահկանացուներից ոչ ոք չէր կարող գերազանցել Աթենասին այդ արվեստի մեջ: Բոլորը գիտեին, թե որքան դժվար է մրցել նրա հետ այդ գործում, գիտեին նաև, թե ինչպես հատուցեց դրա համար Իդմոնոսի դուստրը՝ Արաքնեն, որ ուզում էր Աթենասից էլ բարձր լինել այդ արվեստում: Արաքնեն մշուշի պես կիտված թելերից օդի պես թափանցիկ գործվածքներ էր անում, հպարտանում,

որ աշխարհում չկա մեկը, որ հավասար լինի իրեն գործելու արվեստի մեջ:

Արաքնեի առջև հայտնվեց Աթենաս աստվածուհին և մրցության հրավեր արեց: Արաքնեն բաց թողեց նրբահյուս գործվածքը, ցասումից փայլող աչքերով հրավերքն ընդունեց:

Մրցությունն սկսվեց: Դիցուհի Աթենասը իր ծածկոցի վրա՝ մեջտեղում, գործելով պատկերում էր աթենական վսեմաշուք Ակրոպոլիսը:

Արաքնեն իր ծածկոցի վրա պատկերեց շատ տեսարաններ աստվածների կյանքից, որոնց մեջ աստվածները երևում էին թույլ ու մարդկային կրքերով համակված: Իսկ շուրջը Արաքնեն բաղեղագալար ծաղիկների պսակ գործեց: Կատարելության գագաթ էր Արաքնեի աշխատանքը, իր գեղեցկությամբ չէր զիջում Աթենասի աշխատանքին, բայց նրա պատկերացումների մեջ ակնհայտ էր անհարգալից վերաբերմունքն աստվածների հանդեպ: Ահեղորեն զայրացավ Աթենասը, պատառոտեց Արաքնեի աշխատանքը և հարվածեց նրան մաքոքով: Արաքնեն չկարողացավ տանել այդ ամոթանքը, պարան հյուսեց, օղակ արեց և կախվեց, բայց Աթենասը ազատեց Արաքնեին և ասաց.

– Ապրի՛ր, անհնազա՛նդ, բայց մշտապես կախված կմնաս ու մշտապես կգործես. այս պատիժը կկրեն նաև քո հետնորդները:

Աթենասը ցողեց Արաքնեին կախարդական բույսի հյութով, և իսկույն նրա մարմինը կծկվեց, փարթամ մազերը թափվեցին, և նա սարդի կերպարանք առավ:

Այդ ժամանակից ի վեր Արաքնե–սարդը կախ է ընկած ոստայնից և մշտապես գործում է, ինչպես գործում էր իր կենդանության օրոք:

Գրականություն

Նիկոլայ Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները,

Սարդոստայն

Որոշ գիտական տեղեկությունների (սարդեր,սարդատզեր, կեղծ կարիճներ և այլն) ոստայնագեղձերի հեղուկ արտազատուկ, որը ձգվելով առաջացնում է օդում արագ պնդացող բարակ թելեր: Կազմությամբ նման է շերամի մետաքսին, հիմնականում կազմված է ջրում չլուծվող, ամուր ֆիբրոինից: Կենդանիներն իրենց սարդոստայնն օգտագործում են որսացանցեր, բներ և ձվաբոժոժներ պատրաստելու, որսին խճճելու համար: